ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ

«18» նոյեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-47/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24204-15, 02.09.2015թ. թիվ 1/73-1/24151-15 և 25.02.2016թ. թիվ 1/73-3/6961-16 գրություններով ներկայացված «Վիններ Թայերս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01558866) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 02.09.2015թ. թիվ 1/73-1/24204-15, 02.09.2015թ. թիվ 1/73-1/24151-15 և 25.02.2016թ. թիվ

1/73-3/6961-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Վիններ Թայերս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, ՀՀ քաղաքաշինության նախարարության, Գյումրու քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.09.2015թ. թիվ 32-460, 01.09.2015թ. թիվ 02/16.3/4898-15, 31.08.2015թ. թիվ 03/02.4/7123-15 գրությունների պատճենները:

2. «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 16.09.2015թ. թիվ 02/04.1/2385-15, 19.02.2016թ. թիվ 01/04.2/570-16 և 03.03.2016թ. թիվ 01/04.1/775-16 գրություններով կարծիք ստանալու նպատակով դիմել է Ընկերությանը, սակայն վերջինիս կողմից գրավոր պատասխան չի ստացվել:

«Վիններ Թայերս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 28.06.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-47/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը, ինչպես նաև որևէ առարկություն չի ներկայացրել ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

3. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, ՀՀ քաղաքաշինության նախարարության, Գյումրու քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումները

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 01.09.2015թ. թիվ 32-460 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հայտարարված «ՀՀՌՑ-15.1-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի հայտատու «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու վերաբերյալ կեղծ փաստաթղթեր, ինչը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.08.2015թ. տրամադրված եզրակացությամբ:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 01.09.2015թ. թիվ 02/16.3/4898-15 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար ներկայացնում է «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը:

Գյումրու քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 31.08.2015թ. թիվ 03/02.4/7123-15 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ուղարկում է «ՀՀՇՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/15» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված բացասական եզրակացությունը:

Պատվիրատուները, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.06.2016թ. ժամը 17:03-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-47/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24204-15, 02.09.2015թ. թիվ 1/73-1/24151-15 և 25.02.2016թ. թիվ 1/73-3/6961-16 գրություններով

ներկայացված «Վիններ Թայերս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀՀՌՑ-15.1-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգ

- «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀՀՌՑ-15.1-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***17.08.2015թ.*** հայտ է ներկայացրել «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (***17.08.2015թ.***) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 20.08.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 2015թ. օգոստոսի 17-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 187,102 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հայտարարված «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգ

- ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կազմակերպվել է «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***10.08.2015թ.*** հայտ է ներկայացրել «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (***10.08.2015թ.***) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 18.08.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 2015թ. օգոստոսի 10-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 185,500 ՀՀ դրամի չափով:

3. Գյումրու քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՀՀՇՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/15» ծածկագրով ընթացակարգ

- Գյումրու քաղաքապետարանի ի կողմից կազմակերպվել է «ՀՀՇՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/15» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***20.08.2015թ.*** հայտ է ներկայացրել «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (***20.08.2015թ.***) չունի ժամկետանց

հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 24.08.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 2015թ. օգոստոսի 20-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 236,830 ՀՀ դրամի չափով:

5. ՍՑ-ԳԲԽ-47/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24204-15, 02.09.2015թ. թիվ 1/73-1/24151-15 և 25.02.2016թ. թիվ 1/73-3/6961-16 գրությունները, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, ՀՀ քաղաքաշինության նախարարության, Գյումրու քաղաքապետարանի 01.09.2015թ. թիվ 32-460, 01.09.2015թ. թիվ 02/16.3/4898-15, 31.08.2015թ. թիվ 03/02.4/7123-15 գրությունները և գրություններին կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 20.08.2015թ., 18.08.2015թ. և 24.08.2015թ. կատարած հարցումներով խնդրել են Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուներին տրամադրվել է եզրակացություններ, համաձայն որոնց «Վիններ Թայերս» ՍՊԸ-ն հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ՝ 2015թ. օգոստոսի 17-ի դրությամբ՝ 187,102 ՀՀ դրամի չափով, 2015թ. օգոստոսի 10-ի դրությամբ՝ 185,500 ՀՀ դրամի չափով և 2015թ. օգոստոսի 20-ի դրությամբ՝ 236,830 ՀՀ դրամի չափով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի կողմից «ՀՀՌՑ-15.1-ՇՀԱՊՁԲ-15/6», «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-15/6» և «ՀՀՇՄԳՔ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/15» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում 17.08.2015թ., 10.08.2015թ. և 20.08.2015թ. հայտերի թիվ 2 հավելվածներով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի **«բ»** ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Վիններ Թայերս» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնը արձանագրում է, որ «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, «Վիններ Թայերս» ՍՊԸ-ի կողմից 10.08.2015թ. թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտում և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո մասնակցի կողմից 17.08.2015թ. և 20.08.2015թ. ներկայացված հայտեր, որոնց շրջանակներում մասնակցի կողմից նույնպես թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտումներ:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով, (...) եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ (...):***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24204-15, 02.09.2015թ. թիվ 1/73-1/24151-15 և 25.02.2016թ. թիվ 1/73-3/6961-16 գրություններով ներկայացված «Վիններ Թայերս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01558866) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-47/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դավթյան